

մենում թոյլ տալ որ Առևտուրիչը քանդէր նոցա մեհանները: Թէպէտ սոքա յաղթուեցան, թէպէտ Առևտուրիչը քանդեց և կործանեց նոցա մեհանները և արձանները, և նոցա տեղ շինեց այն սուրբ Կարապետի վանքը, որը մինչև այժմ երևելի ուխտատեղի է Հայոց համար և կոչում է Մշու սուրբ Կարապետ, բայց այնու ամենայնիւ շուտով չվերջացաւ հրնդկական դէնը: Սորա դաւանողները սովորութիւն ունէին գերծել բոլոր գլուխը և միայն կառափին կամ գանգի վերայ թողնումէին մի երկար ծամ: Ահամայ կամօք ուրանալով իւրեանց կրօնը և ընդունելով քրիստոնէութիւնը՝ նոքա հոգով և սրտով դարձեալ մնումէին հաւատարիմ իւրեանց կրօնին, և իբրև նշան իւրեանց այդպիսի հաւատարմութեան՝ պահպանումէին գլուխը գերծելու և երկար ծամ թողնելու կրօնական սովորութիւնը և քրիստոնէութեան ժամանակ: Չհնոք Գլուխը ասում է. «Աւ Գիսանէ զի զիսաւոր էր, վասն այնորիկ և պաշտօնեայք նորա դէսս ունէին. զի յորժամ ի Վրիստոս դարձան՝ ոչ էին կատարեալ ի հաւատս և զհայրենի օրէնսն չիշխէին յայանի ունել, ապա խաբէութեամբ զայս հնարս իմացան՝ ծամ թողին ի գլուխս մանկանցն, զի զայն տեսեալ յիշեսցեն զառաջին պղծութիւն իւրեանց: Որ և ես աղաչեմ զգոյշ կացէք, զի մի և ի ձերում երկրիդ սերմանիցի, 44): Ահա այս սովորութիւնը՝ գերծել գլուխը և թողնել միայն մի ծամ իսկ և իսկ գանգի վերայ՝ մնացել է մինչև այսօր Ամնայ և մերձաւոր գաւառների բը-

նակիչների մէջ. շատերից շատ անգամ հարցրել եմ ես այդ սովորութեան պատճառը կամ բացատրութիւնը, բայց միշտ լսել եմ մի և նոյն պատասխանը—թէ ինքեանք չեն իմանում պատճառը, այլ այսպէս մնացել է իւրեանց նախնիքներից:

(Մատենադարան):

Վահան Վարդապետ Բաղասեան.

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ՍԱՆՍԿՐՈՒԿ ԹԱԳԱՆՈՐԻ ՎԱՆՃԱՆԸ

(Նախնական):

Վարդապետ Բ.

ԵՐՈՒԱՆԻ, ԵՐՈՒԱՋ ԵՒ ԱՐԳԱՄ
Երուանդ:

Բարեաւ եկիր իմ յարգելի քաջ Արգամ,
Վերադարձնց փթիկաւ ծաղիկ անթաւամ,
Ինչու այդպէս վաղ ձգեցիր գինեբրուք,
Ձը կեցար մինչ արգայն կոչէր պարերգութիւն,
Արգամ

Ես չունէի այսօր փափագ պարերգութեան.
Ինչպէս որ դու չկեցար ցլերի գինեբրուց,
Կը զգո՞ւիմ երբ ուրախութեան հացիկըրոյթ,
Կուտայ շուտ շուտ անարգութեան երևոյթի:
Երուանդ:

Անարգութիւն նա միայն իմ գէմ կանէ,
Իսկ քեզ, կամ այլ նախարարաց կը պատուէ,
Ով չը գիտէ թէ մեր մայրը այր չունէր,
Ինչու պիտի այդ դէնք չիներ ընդդէմ մեր:
Երուանդ:

Ես դարձեալ իմ ասածս պիտի երկրորդեմ,
Երթալ պէտք է մէկ այլ երկիր տարագէմ,
Թող վայելէ արիւնջադախ աթուր,
Ես դիցական պատիւ ձոնէ իւր հօրը.
Արգամ:

Ով էտեսել նորա հօրը կամ մօրը.
Որոյ կին էր Արգարու այն մէկ քայրը.
Աւանդութիւնք բազմագիմի կը պատմեն.
Բայց ուր դառնաս դորա ծնողք յայտնի չեն:
Արշակունեաց սովորական ժեսերով (1)

(1) Վաղարշակի դրած օրէնքն էր, որ միայն ժառանգը կը մնայր հօր մօտ:

Արքայազունի պիտի ասորին հասերով,
 Ինչ որ արքայն նոցա կուտայ ի կայուած,
 Հաշտենից կողմ, Աղիովտի, կամ ծովաց,
 Արքաքը նոյնպէս երբ հօր աթոռն է նստել,
 Իւր այս քոյրը իւր կայուածն է ուղարկել,
 Դիտոյն և իւր ըստնդեաց զաւակը
 Մընացել են փոթորկածին ձեան տակը:
 Որսորդ չունը գտել է այն երեսին,
 Պատասխարեալ ի ծոց Սանոտ զայեկին,
 Այն պատճառաւ Սանատրուկ են անուանել,
 Սանոտոյ տուրք կամենալով գլու յայտնել:
 Այլ ք հը պնդեն թէ հաւատարուկ է ասած,
 Հան օգնութեամբ գլով մահէն ազատուած,
 Բայց Արքայն է նորա անուն փոխարկել,
 Եւ զայեկի Սանոտ անուն ընտրել,
 Թէ այս, թէ այն, բայց ժընդոքն չեն յիշուած,
 Քեռորդի էր սա Արքարու յորօրչուած,
 Այլ թէ քոյրը որ իշխանին էր զուգեալ,
 Ոչ ոք գիտէ, ուրեք, երբեք չէ յիշեալ
 Երուալ:

Արքարու իսկ անունն Արքար կոչել են,
 Ասորոց ծուռ կործանչու խօսելեն,
 Նորա անուն չէ յայտ թէ ինչ է եղած,
 Միայն Աւագ այր մականունն է մնացած:
 Երուանդ:

Արգամ միտքդ է սորա աթոռ բաղմելը,
 Եղեսիս կամ Միլագեացք մըտնելը:

Արգամ

Դեռ ևս էի ես տասնամեայ պատանի,
 Երուանդ:

Հասակակից ենք մենք ուրեմն համատի,
 Բայց այսօրվան պէս պահածեմ ի մորի,

Արգամ:

Դա յարքունիս, ես հանապաղ ի զայտի-
 Երուալ:

Երանի թէ ի զայտ լինէր մեր վիճակի,
 Երուանդ. (աճիկ ժպիտով)

Արքայի հետ ով կը կտրէր այն բաժակ:
 Արգամ:

Երուանդ այն ինչ էր որ ճաշին տրարեր,

Գիտես արքայն ալը տարաւ առ սուսեր,
 Երուանդ:

Տեսաք զու իմ ծուռ նայել արքային

Իւր աւսերը կը լնախախտէր իւր գլխին,
 Արգամ:

Կարծիք կանեմ որ թէ կրկնէ խրախճան,

Եւ գուժաբէ շատ սըրիկայք դաւաճան,

Որ սեղանոյ վերայ դքեզ խողովողն:

Եւ բաժակի նախատինքն վրժեակէն:

Երուալ:

Լաւ է նորա կոյուղք այլ ևս չերթալը

Երուանդ:

Այլ քոյր կուտայ իմ զարանէն խիթալը:

Արգամ:

Եթէ Երթաս մահն անշուշտ կայ պատրաստ,
 Երուանդ:

Եթէ չերթամ պիտի կոչէ զիս անաստ:
 Երուալ:

Լաւ չէ արդեօք այս կողմերէն գաղթելը

Երուանդ:

Եւս առաւել լաւ է յարին յաղթելը:

Արգամ:

Ինչով պիտի այս յարերու գու յաղթես:
 Երուանդ:

Իմ խորհուրդը որ բացաղբեմ կը լըսես

Արգամ:

Ես պատրաստ եմ ամեն խորհուրդ լըսելոյ,
 Երուալ:

Եւ խորհրդեան քեմ պատասխան տալոյ:
 Երուանդ:

Արգամ ունիմ վրկայք ազգիս ձերերէն-

Որ ես հենի չեմ պարթեաց աթոռէն,

Սա քեռորդի էր Արգարու արքայի,

Եւ թագ դրեց, ի հաւարան քաղաքի,

Մինչ Արգարի օրինաւոր ժառանգը,

Պայազատեց Եղեսիոյ քահնոյքը,

Արգար ժառանգ էր Արշամայ աթոռոյն,

Արգամ ով էր, յայտնի չէր մեր ձերերոյն,

Ոմանք կանեն էր խորթ եղբայր Տիգրանայ,

Բազումք ևս թէ հարձորդի էր նորա,

Բայց Արտաւազդ չէր անգաւակ անարդի,

Նա ևս ունէր պարթեական հարձորդի,

Նորա թոռն էր իմ վատարաղդ տգեղ մայր,

Որ վրան ուժոյն իւր մընացած էր անայր,

Նորա դին ժառանգարար ևս ունիմ,

Դեռ չեմ տեսած ոք ախոյեան աջոյն իմ,

Թէ ծուռ նայիմ կը հերձանեմ սրձաքար,

Սանատրուկ ինձ լար ձգել յի մարթանար,

Բայց ես կարեմ ընդդէմ նորա բռնանալ,

Նա աթոռը չէ իրաւամբ ժառանգեալ:

Ուղիղ ժառանգ արտաւազդայ, Երուանդ է:

Նա Արշամայ աղլըկորդոյ սերունդ է:

Աղբն արւամին այն պատճառաւ ընդունեց,

Որ նա Հռոմայ լեզիւնքն դուրս վանեց,

Երբ վերին Հայք այլոց ձեռին մընային,

Արշամ մաքրեց աշատեց Հայքն ստորին:

Ժամանակ չէր մանրամասն քննութեան,

Ոտնակոյն էր եղել իրձուկ Հայաստան:

Բայց Արշամի սերունդ չմնաց թագաւոր,

Սանատրուկը նստաւ որպէս բռնաւոր,

Արգարու տան ձեր և մանուկ կոտորեց,

Մինչև բամբի տիկնութիւնը ագահեց,

Արեամբ զանգեալ աթոռն նստաւ բռնութեամբ,

Եւ ձեռքերը կը շաղախէր միշտ արեամբ,

Ով իւր դուստրը իւր ձեռամբ կը խողովողէր

Սանգուստ զշողն այս անգութ հօր զոհը չէր:
 Եղեսիս վկայ էր այս խոթութեանց,
 Եղեսացիք չէին տանող բռնութեանց,
 Կա այն քաղաք թողեց շինեց այս Մծբին,
 Արձան կանգնեց վրէն գրեց մինաց մին:
 Քան զայս աւել ինչ գործ ունի գովելի,
 Մէկ սորուկ է Հռոմայ և ոչ աւելի:
 Սորա նըման էր և Աբգար Թագաւոր,
 Որ ամրացոյց Եղեսիան փառաւոր,
 Եթէ նըման չը պատահէր այն ախտը,
 Հայոց աղբին կը ծառայէր իւր քաղաք:
 Կա կամեցաւ վրտարանգել Հռոմէն,
 Եւ լեզւօնք նորա հանել իւր երկրէն:
 Բայց այն անբոյժ հիւանդութիւնն խափանեց,
 Հայոց աղբի ազատութիւնը յետ ձգեց:
 Ինչ էր այսօր այն հաղկերոյթ գետապանի,
 Ինչ կարէ տալ յագուրդ անյազ գազանի:
 Ինչու Պարսիկք շնուածուեցան Հռոմէն,
 Ինչու միայն Հայք կարտուեցան նոցամէն,
 Արգամ, եթէ այսպէս երթայ մեր բանը,
 Ասկի, արծաթ բնա չի մնար մեր տանը:
 Երեսուն տմ նստած պարսպ միշտ կուտէ:
 Տասնապատիկ աւել Հռոմին կուտեցնէ:
 Ես մշտադիր եմ յետադարձ առնելոյ,
 Ժառանգական իմ աթոռս նստելոյ:

(Ներս մտաւ Սյուսի իշխան Սյուսեանց)

(Շարունակելէ):

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ա. Ե. Զ. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ.

Ի 5-ն ամսոյս Ա. Ե. Զ. Կաթողիկոս ամենայն Հայոց մեկնեցաւ աստի, և մի գիշեր ի Սարտարապատ և երկու գիշեր ի Մաստարա հանգիստ առնելով, յՑ ն գնաց ի վանքս Հառիճոյ որ ի Խոյնաղ, ուր Նորին Ս. Օծութիւնն մի քանի ամիս պիտի անցուցանէ յօղափոխութեան:

ՄԱԿԱՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ՊԵՏՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Յ. Զ. 2-ն ամսոյս Գ. Երապատիւ Մակար Երբեպիսկոպոս թեմակալ Առաջնորդն

Վ. Երապատիւ և Իմէրէթի վերադարձաւ ի Տփլիս:

Նոյնպէս Գ. Երապատիւ Պետրոս Եպիսկոպոսն Վ. Երապատեան գնաց ի Պոլիս անձնական տկարութեան համար:

ԽՈՐԷՆ. ՎԱՐԴԱՊԵՏ.

Վ. Ե. Զ. Հայրապետ բարեհաճեցաւ Արեանայ թեմ. վարժարանին միանգամայն Տիսական դպրոցաց տեսչութիւնը յանձնել Արժ. Խորէն նորրնձայ վարդապետին:

Յուսով եմք՝ զի մերազնեայք աջակցելով նորին ջանից և փութոյն՝ փոխադարձ պարտաւորութեանց կատարմամբք՝ վարժարանը կազատուի յոչ սակաւ ժամանակաց հետէ ենթարկուած բարձիթողի և անօգուտ դրութեանէն, և մանկուք ազգիս իւրեանց թանկագին ժամանակները կը շահին և կը զարգանան բարոյական և մտաւորական մանաւանդ ազգ. ուսմամբք և կարեւոր զիտութեամբք:

ԱՐԽԵՍԿԱՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ.

Երբեմն Նուխույ Փոխանորդ բարեջանորհ Արիստակէս վարդապետ կարգեցաւ Առաջնորդական փոխանորդ ի Նոր—Նախիջևան ի տեղի Գէորգ վարդապետի Տէր—Մարտիրոսեանց:

Նորին Արժանապատուութեան ուսումնասէր և բարեհամբոյր վարք և բարք արժանի են Նախիջևանայ մերազնեայ Համակրութեանց և յարգանաց, զոր անշուշտ գործովքն ի սուղ միջոցի կ'յուսամք տեսնել: